Արձանագրություն N 03

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-36/25» ծածկագրով գնանշման հարցման գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

03 սեպտեմբերի, 2025թ, ժ 15:00,
«Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ»
ՀԿՀ, Շիրակի մարզ,
ք. Գյումրի, Վարդանանց հր. 1

Հանձնաժողովի նախագահ՝
1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
Հանձնաժողովի անդամներ՝
2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,
3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ
4) Աստղիկ Խաժակյան - Գյումրու համայքնապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ,
5) Անահիտ Խաչատրյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի ժամանավոր պաշտոնակատար,
Հանձնաժողովի քարտուղար՝
Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ.

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-36/25» ծածկագրով գնանշման հարցման միջոցով մրցույթի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 20.08.2025թ. էլեկտրոնային եղանակով տեղադրվել է www.gnumner.am հասցեում:

1.2 «Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ -ի կարիքների համար չափագրման ծառայությունների ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-36/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի համաձայն գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Մասնակցի	
Անվանումը	Հասցեն
Ա/Ձ Մարինե Մինասյան	Կամոյի փողոց/Շ/40Ա 52, Գյումրի, Շիրակ, Հայաստան
«Գլոբալ Փարթներս Գրուպ» ՍՊԸ	Ք. Երևան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա, 37/4 տարածք

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակցի կողմից ներկայացրած հայտում առկա է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող փաստաթղթերը: Փաթեթում ներկայացված փաստաթղթերը հաստատված են:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

1.6. Մասնակցի առաջարկած գինը

Հ/հ	Անվանումը	Ա/Ձ Մարինե Մինասյան		«Գլոբալ Փարթներս Գրուպ» ՍՊԸ		Գնման հայտով նախատեսած գին
		Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ	/ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
1.	Շենք-շինությունների չափագրում մինչև **300քմ** /շենքի պահպանման և սպասարկման համար զբաղեցրած հողամասը ներառյալ/	-	-	-	-	25 000
2.	Շենք-շինությունների չափագրում **300-ից 1000քմ** /շենքի պահպանման և սպասարկման համար զբաղեցրած հողամասը ներառյալ/	-	-	-	-	55 000
3.	Շենք-շինությունների չափագրում **1000-ից - 3000քմ և ավել** /շենքի պահպանման և սպասարկման համար զբաղեցրած հողամասը ներառյալ/	-	-	-	-	95 000
4.	Հողամասի չափագրում **Մինչև 500քմ**	16 900	16 900	19 000	19 000	20 000
5.	Հողամասի չափագրում **500-ից 1000 քմ**	22 000	22 000	24 000	24 000	25 000
6.	Հողամասի չափագրում **1000-ից – 10 000 քմ**	28 000	28 000	28 000	28 000	30 000
7.	Տեղանքի գեոդեզիական հանույթ – մինչև **2000քմ**	31 900	31 900	-	-	35 000
8.	Տեղանքի գեոդեզիական հանույթ –**2000-ից – 10 000 քմ**	49 900	49 900	-	-	55 000

Հանձնաժողովը արձանագրեց՝

- Ա/Ձ Մարինե Մինասյանը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկ չի ներկայացրել, իսկ 4-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ներկայացրած գնային առաջարկները Պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գնի սահմանում են և նվազագույնն են:
- **6-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Մարինե Մինասյանի և «Գլոբալ Փարթներս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկները հավասար են:**
- Ա/Ձ Մարինե Մինասյանի հայտում բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիան, ինչն անհրաժեշտ է ներկայացնել 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- Հրավերի պահանջների համաձայն՝ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը հավասար գներ ներկայացրած մասնակիցներին համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցման եղանակով, միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:
- Ա/Ձ Մարինե Մինասյանը ներկայացրեց հրավերով պահանջվող փաստաթուղթը, բանակցության նիստին ներկա էր միայն Ա/Ձ Մարինե Մինասյանը, ով գնային նվազեցում կատարեց և ճանաչվեց հաղթող:

Հանձնաժողովը որոշեց՝

- 4-ից 8-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչել Ա/Ձ Մարինե Մինասյանին:
- 1-ից 3-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:
- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենիք 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետը 10 օրացուցային օր է:
- Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին կուղարկվի պայմանագրի նախագիծը, ինչն անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել և ներկայացնել պատվիրատուին: Անհրաժեշտ է նաև ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ գումարի տեսքով:՝

  Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Ավետիս Առաքելյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ---------- Դմիտրի Մանվելյան (ԳՊ/ԳԱ)

---------- Դավիթ Հարությունյան (ԳՊ/ԳԱ)

---------- Վարդան Զարիֆյան (ԳՊ/ԲԱ)

---------- Հրաչիկ Վարդանյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ---------- Արմինե Սարգսյան (ԳՊ/ՄՀմ)